ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ - Ա

ՄԵԾ ՊԱՐՆԻԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԱԽԿԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԸ
ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ
ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով «ՄԱՐ-ՄՈՍ» ՍՊԸ-ի կողմից 27.03.2024թ. տրամադրված «Շարժական գույքի գնահատման հաշվետվությունը», որի համաձայն գույքի շուկայական արժեքը կազմում է 2 200 000 ՀՀ դրամ, հաշվի առնելով, որ Մեծ Պարնիի գյուղապետարանի նախկին վարչական շենքը ոչ հիմնական փայտյա շինություն է, որը ներկայումս չի շահագործվում համայնքային կարիքների համար և տրամադրված չէ որևէ անձի օգտագործման նպատակով, շինությունը առանց լրացուցիչ ծախսերի հնարավոր չէ շահագործել, այն հրդեհավտանգ է, կարող է ցանկացած ժամանակ հրդեհվել և վնաս պատճառել համայնքին, իսկ դրա օտարումից համայնքի բյուջե կմուտքագրվեն ֆինանսական միջոցներ՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համաձայնություն տալ Մեծ Պարնիի գյուղապետարանի նախկին վարչական շենքը աճուրդով օտարելուն՝ ապամոնտաժելու և հողատարածքը ազատելու պայմանով:

2. Գույքի աճուրդով օտարման մեկնարկային գին սահմանել 2 200 000 ՀՀ դրամ: